

ՀԱՄԽ-ԻՆ ԿԻՑ ԳՅՈՒՏ-ԽՈՐՀՈՒՐԴ

ԳՅՈՒՏԱՐԱՐՆԵՐԻ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
5-ՐԴ ՊԼԵՆՈՒՄԻ

Վ Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ն Ե Ր Ը

Ընկ Ա. Բ. Խալաթովի — Գյուտարանների
Խամաժութեան ընկերության կենտրո-
նական խորհրդի 5-րդ պլենումում ձված
գեկուցման քննարկը

608
9-69

Հ Ր Մ Տ Ա Ր Ա Վ ՈՒԹ Յ ՈՒՆ Հ Ա Մ Խ - Ի

20 MAR 2013

20 JUL 2010

608
7-69

Պատկերներ բոլոր յնքերների, միացնել

ՀԱՄԽ-ԻՆ ԿԻՑ ԳՅՈՒՏ-ԽՈՐՀՈՒՐԴ

ԳՅՈՒՏԱՐԱՐՆԵՐԻ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
5-ՐԴ ՊԼԵՆՈՒՄԻ

ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

1132
37

ՀԱՅ. Ա. Բ. Խալաթովի — Գյուտարների
Խամախուքենական ընկերության կենտրո-
նական խորհրդի 5-րդ պլենումում օրված
գեկուցման քննարկ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԽ-Ի

ՅԵՐԵՎԱՆ

1936

ՄԵՐ ԽՈՒՑ

Թարգմանեց Ա. Փալանջյան
Տեխ. խմբ. յեկ սրբ. Ա. Հանովեզյան

**ԳՅՈՒՑԱՐԱՐՆԵՐԻ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 5-ՐԴ ՊԼԵՆՈՒՄԻ
ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

Ընկերություն կենտրոնացրել Գալստյան ընկ. Ա. Բ. Խալաթովի
«Գյուտարարների Ընկերություն խնդիրները 1935—36 թվին»
գեկուցման առթիվ

1. Համաձայնությամբ տալ ընկ. Ա. Բ. ԽԱԼԱԹՈՎԻ գեկուցմանը և հրատարակել առանձին գրքուկով, իբրև ղեկավարող մատերիալ Ընկերության աշխատանքների համար:
2. Հաստատել ընկ. Ա. Բ. ԽԱԼԱԹՈՎԻ գեկուցման թեզերն իբրև 5-րդ Պլենումի վերջում:

**ԸՆԿ. Ա. Բ. ԽԱԼԱԹՈՎԻ ԳՅՈՒՑԱՐԱՐՆԵՐԻ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 5-ՐԴ ՊԼԵՆՈՒՄՈՒՄ
ՏՐՎԱԾ ԶԵԿՈՒՑՄԱՆ ԹԵԶԵՐԸ**

1. ԳՅՈՒՑԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԽՍՀՄ-ՈՒՄ

1. Խորհրդային գյուտարարությունը վերջին տարիների ընթացքում ձեռք է բերել զգալի նոր նվաճումներ: Այդ նվաճումներն արտահայտվում են բանվորական լայն մասսաների, կոլտնտեսականների, տեխնիկների և ճարտարագետ-գիտնականների ասեղծագործ նախաձեռնությունների հետագա զարգացմամբ: Ընկերության մարմինների հաշվետու տվյալներով՝ ձեռնարկություններում 1934 թ. ստացված գյուտարարական և ուսցիոնալիդատորական առաջարկների քանակը հասել է 666 հազարի, ի



Պետրոսյան Տպարան Յերևան

Հանձնված է արտագրության 13-ին փետրվարի 1936 թ.
Ստորագրված է տպագրելու 11-ին մարտի 1936 թ.

դիմաց 1933 թ. 430,5 հազարի—աճ՝ 55 տոկոսով: Աձել է նաև Աշխատանքի և Պաշտպանության խորհրդին կից կոմիտեի նորոգությունների բյուրոյին տրված հայտերի քանակը մինչև 20-146՝ ի դիմաց 18-559—ի 1933 թ. աշինքն՝ 8,5 %-ով: Ձեռնարկություններից ստացված տվյալներն ասում են այն մասին, վոր տեխնիկական առաջարկները մակարդակը բարձրացել է իր գրադիտությունամբ և տեխնիկական եֆֆեկտով:

Ժողովրդական տնտեսության և կուլտուրական շինարարության մի շարք մարդերում գյուտարարական կադրերը տվել են բազմաթիվ խոշորագույն գյուտարարական նվաճումներ, վորոնք վկայում են գիտա-տեխնիկական մտքի անշեղ աճն յերկրում, վկայում են այն մասին, վոր մենք գործնականում հասնում ենք և անցնում առաջավոր կապիտալիստական յերկրների տեխնիկայից:

Գյուտարարության այդ հաջողությունները հսկայական հաղթանակների հետևանք են, վորոնք ձեռք են բերված առաջին հնգամյակում և յերկրորդ հնգամյակի անցած յերեք տարում խորհրդային Միության բանվոր դասակարգի կողմից սոցիալիստական շինարարության բնագավառում՝ կոմունիստական կուսակցության և ամբողջ աշխարհի աշխատավորների մեծ առաջնորդ ընկ. ՍՍՍՐԽԻ դեկավարությունամբ:

Խորհրդային գյուտարարության աճն ապահոված եր կուսակցության և կառավարության դեպի այն ունեցած մշտական ուշադրությունամբ, ամուր կազմակերպչական հիմքով, վորը դրվել է խորհրդային գյուտարարության գործում Համ Կ(բ)Կ Կենտկոմի 1930 թ. հոկտեմբերի 26-ի պատմական վորոշումով, կուսակցության և կառավարության հետագա վորոշումներով 1933 թ. և 1935 թ. Համ Կ(բ)Կ Կենտկոմի գիտության, գիտա-տեխնիկական գյուտերի և հայտնաբերումների բաժնի ստեղծմամբ:

2. Միության դարգացող ժողովրդական տնտեսությունը գյուտարարության առաջ նորանոր աճող պահանջներ եր դնում: Չնայած ձեռք բերված նվաճումներին, խորհրդային գյուտարարությունը այնուամենայնիվ դեռ հեռ է մնում սոցիալիստական տնտեսության կողմից առաջադրվող պահանջներից, յերկրորդ հնգամյակի կողմից նրա առաջ դրվող խնդիրներից: Կուսակցության 17-րդ համագումարի նակագր՝ «գիտա-տեխնիկական և գյուտարարական միտքը պետք է դառնա հզոր զենք նոր

տեխնիկան արմատացնելու, արտադրության նոր ձևեր կազմակերպելու, հումուցթի և եներգիայի ոգտագործման նոր միջոցներ կազմակերպելու գործում»—պահանջում է խորհրդային գյուտարարներից հետագայում ե՛լ ավելի լարել իրենց ուժերը, լայն ծավալել մասսայական գյուտարարական շարժումը, բարելավել գյուտարարական աշխատանքի կազմակերպումը, ուժեղացնել դասակարգային զդանությունը և պայքարը դասակարգային խորթ տարրերի մնացորդների դեմ, վորոնք վործեն են անում սաբոտաժի յենթավրկել և դիմադրություն ցույց տալ տնտեսական ֆրոնտի այս բնագավառում:

3. Աշխատավորական լայն մասսաները ընդգրկած ստախանովյան շարժումը աշխատանքի բարձր արտադրողականության համար, ընկ. ՍՍՍՐԽԻ՝ տեխնիկան մինչև հատակը ոգտագործելու մասին ցուցմունքն իրագործելու համար գորեղ ազդակ է ստեղծում գյուտարարական—ռացիոնալիզատորական աշխատանքի հետագա դարգացման և նրա վորակի բարձրացման համար: Ստախանովականները—դա արտադրության առաջամարտիկներն են, վորոնք կարողացել են տիրապետել իրենց գործի տեխնիկային, քամել նրանից մաքսիմումը և ցույց տալ աշխատանքի սոցիալիստական արտադրողականության ղեկորդներ:

Արտադրության մեջ ստախանովականների հեռ կողք-կողքի աշխատող գյուտարարներն ու ռացիոնալիզատորները իրենք պետք է տիրապետեն ստախանովական մեթոդներին և այդ շարժման առաջին շարքերում տեղ գրավեն իրենց համար:

Ստախանովական մեթոդներին տիրապետելը, ստախանովականների վործի ուսումնասիրումը՝ գոյություն ունեցող տեխնիկան մինչև հատակն ոգտագործելու համար իր հերթին պետք է տա գյուտարարներին և ռացիոնալիզատորներին հարուստ նյութ՝ այդ տեխնիկայի հետագա կատարելագործման համար. գոյություն ունեցող մեքենաների և մեխանիզմների կատարելագործումը, նոր, ավելի կատարելագործված մեքենաների ստեղծումը, արտադրության նոր-ձևերի, հում նյութի և եներգիայի նոր մեթոդներով ոգտագործումը:

Ստախանովական շարժումը հանդիսանում է հարուստ ագբյուր ստախանովականների միջից գյուտարարների նոր վաղրեր առաջ քաշելու յեմ ձեռնարկներում տրվող գյուտարարական—ռացիոնալիզատորական առաջարկների աճի համար:

4. Գյուտարարութեան կազմակերպչական ձևերը սոցիալիստական արդյունաբերութեան և գյուղատնտեսութեան մեջ սպառիչ կերպով ցույց են տրված ՀԱՄԿ(Բ)Կ. Կենտկոմի 1930 թ. հոկտեմբերի 26-ի «ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԳԹՈՒՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» վորոշման մեջ և ԽՍՀՄ Ժողկոմխորհի և ՀամԿ(Բ)Կ. Կենտկոմի 1933թ. ապրիլի 8-ի «ԴՈՒՐԱՍԻ ԱՇԽԱՐԱՐ-ԴԹՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ» և 1933 թ. հուլիսի 3-ի «ՅԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ» հետագա վորոշումներով:

Այդ պատմական վորոշումները պարունակում են ին բոլոր ախանհարժեշտն ու բավականաչափը՝ գյուտարարութեանը յերկրում հաջող կերպով զարգացնելու համար: Այդ վորոշումները կենսական են և ակտուալ ու ներկայումս նրանք հանդիսանում են մեր գործողութեանների ծրագիրը:

Գյուտարարական գործում յեղած թերութեանները հիմնականում կախված են նրանից, վոր այդ վորոշումները չեն կատարված լրիվ յեվ մինչև վերջը: Դրանց կենսագործման համար բոլշեվիկյան պայքար մղելը հանդիսանում է մեր առաջնակարգ և հիմնական խնդիրը:

5. Գյուտարարութեանը կազմակերպելու հիմնական դերը պատկանում է տնտմարմիններին, վորոնց ձեռքում կենտրոնացված է գյուտերի և տեխնիկական կատարելագործումների ոգտակարութեան գնահատականը գյուտերի ստուգումը, մշակումն ու իրացումը:

ՀԿԿ(Բ)ԿԿ-ի 1930 թ. հոկտեմբերի 26-ի վորոշումը պարտավորութեան է դրել Ժողկոմատների, տնտմարմինների և գործարանային վարչութեանների վրա լրիվին ապահովել բանվորական առաջարկների, կատարելագործումների և գյուտերի ժամանակին քննարկումը, հաշվառումն ու իրացումը յեվ տվել է գործողութեանների պարզորոշ ծրագիր այդ հանձնարարութեանը կատարելու համար:

ԽՍՀՄ Ժողկոմխորհի և ՀԿԿ(Բ) ԿԿ-ի 1933 թ. վորոշմամբ վերացված են գյուտարարութեան գծով գոյութեան ունեցող ֆունկցիոնալ որգանները (ԲԲԻԶ-ները) և գյուտերի իրացումը ղեկավարելու համըղջ գործը անմիջականորեն փենտրոնացված է ցեխերի, ձեռնարկութեանների, տնտմարմինների և Ժող-

կոմատների տնտեսական-տեխնիկական ղեկավարութեան ձեռքում:

Այդ վորոշումները խոշոր դեր խաղացին խորհրդային գյուտարարութեան զարգացման համար և նախափորոշեցին մի շարք հաջողութեաններ ձեռք բերելը:

Սակայն, 1934 և 1935 թ. թ. փորձը ցույց է տալիս, վոր այդ ղեկավարիները տնտմարմինների կողմից դեռ կատարված չեն մինչև վերջն ու լրիվ:

ա) Ամենից առաջ, վոր լրիվ չտրվել և վոր բոլոր ձեռնարկութեաններում իրապես կենսագործվում է գյուտարարութեան անմիջական ղեկավարութեանը տեխնիկական-վարչական պերսոնալի կողմից: Ընկերութեան կենտխորհրդի կատարած ստուգումից պարզված է, վոր մի շարք ձեռնարկութեանների (Ֆրեզեր գործարան, Կրասնիյ Տրեուգոլնիկ, ՎՈՅԿՈՎԻ անվան գործարանը և այլն) ցեխերի պետերն իրենք չեն քննարկում ստացված առաջարկները, չեն լուծում նրանց իրացման հարցը, այլ իրենց գլխից «ռադ» են անում և գցում յերկրորդական, իրավագուրի աշխատակիցների վրա կամ հանձնարարում են այդ աշխատանքը հանձնաժողովներին: Յեխային աղմինխարացիայի անպատասխանատվութեանն ու սարտաթը նման դեպքերում առաջացնում է քաջըռուկ առաջարկների քննարկման գործում, պրանների ու նրանց արմատացման ամուր ժամկետների բացակայութեան, ինչպես նաև անուշադիր վերաբերմունք դեպի գյուտարարական կադրերը:

Դիրեկտորներն ու տեխնիկական ղեկավարները յեվս հաճախ չեն կենսագործում իրենց պարտավորութեաններն ու իրա վունքները՝ գյուտերն ու ռացառաջարկներն իրացնելու գործում: Առանձին դեպքերում շարունակում են գործարաններում գոյութեան ունենալ ջողարկված ձեռվ ֆունկցիոնալ որգաններ՝ գյուտարարական խմբակներ:

Հետևանքն յեղել է այն, վոր հայտնաբերվել են դեպքեր, յերբ բանխորական առաջարկները քննութեան չեն առնվել ամիսներ շարունակ, յերբեմն նույնիսկ տարուց ավելի: Հաճախ գյուտարարին տրված պատասխանը կրել է զուտ բյուրոկրատիկ բնույթ: Եթովերտիզան հանձնարարվում էր վոր բանիմաց մարդկանց: Այս բոլորը առաջ էր բերում առանձին ձեռնարկութեաններում տրվող նոր առաջարկների նվազում:

Գյուտարարական աշխատանքն անբավարար տանող ձեռնար-

կուլթյունների կողքին ունենք մի շարք ձեռնարկուլթյուններ, վորոնք ձեռք են բերել անլիճելի հաջողուլթյուններ: «Մուրճ ու Մանգաղ», ՈՐՁՈՆԻԿԻՁԵՑԻ անվան գործարան (Մոսկվա), Կիրովի գործարան, Բալտիկի գործարան (Լենինգրադ) և այլն, բայց այդ ձեռնարկուլթյունների փորձը չի մասսայականացվում ու անհրաժեշտ աշակցուլթյուն և խրախուսանք չի գտնում:

Մի շարք գլխավարչուլթյուններում գյուտարարուլթյունը ամբողջովին վստահել են յերկրորդական աշխատողներին: Մի քանի ժողկոմատներում (Հոդժողկոմատ, Ջրային ժողկոմատ) գյուտարարուլթյան կազմակերպման գործին անհրաժեշտ ուղղորդուլթյուն չի դարձվում, չունեն նույնիսկ այդ աշխատանքի կարգը վորոշող պարզ դրուլթյուններ: Խոշոր մասշտաբի գյուտերն անթույլատրելիորեն յերկար ժամանակ չեն քննարկվում և իրացվում: Տնտմարմինների կողմից միանգամայն անբավարար է կատարվում նոր գյուտերի համար նորուլթյունների բյուրոյին տրվող հայտերի եքսպերտիզան. այսպես որինակ, 1934 թվի ընթացքում արդյունաբերուլթյանն ուղակված 13.850 հայտից յեղրակացուլթյուն է տրված ոգտակարուլթյան մասին միայն 6.800 հայտի համար, կամ 50%-ից պակաս:

բ) Տնտմարմինների անմիջական խնդիրն է պլանավորել գյուտարարուլթյունը, ուղղել գյուտարարական միտքը ախտուալ տեխնիկական խնդիրներ լուծելու համար, վորոնք ապահովում են ժողովրդական տնտեսուլթյան պլանի կատարումն ու գերակատարումը:

Չնայած նրան, վոր Պետպլանը մեր Ընկերուլթյան մասնակցուլթյամբ ստեղծել է գյուտարարուլթյան թեմատիկ պլաններ յերկրորդ հնգամյակում, սակայն թեմատիկ պլանավորումը (սոցպատ վերներ) ձեռնարկուլթյուններում և ժողկոմատներում դրված է միանգամայն անբավարար: Շատ ձեռնարկուլթյուններ մինչ որս թեմատիկ պլաններ բոլորովին չունեն: Մյուսները թեյեմ կազմել են թեմատիկ պլաններ, բայց դրանք չեն համապատասխանում արտադրուլթյան իսկական պահանջին, կոնկրետ չեն և ստեղծված են կարինետային ձևով—առանց մասսայի և գիտատեխնիկական ու գյուտարարական հասարակայնուլթյան: Իսկ ժողկոմատները չեն ապահովում այդ գործի սխտեմատիկ և ոպերատիվ դեկավարուլթյունը:

գ) Համ Կ(բ) Կենտկոմի վորոշումն ընդգծում էր ձեռնարկուլթյուններում յեղած արտադրական բազայի առաջատար նշա-

նակուլթյունը (եքսպերիմենտալ արհեստանոցներ, լաբորատորիաներ և այլն) գյուտերի իրացման գործում: Չնայած դրան արդյունաբերուլթյունը չ'ապահովեց եքսպերիմենտալ արտադրական բազաների անհրաժեշտ դարգացումը, գյուտարարուլթյան աճող պահանջներին համեմատ, իսկ մի շարք դեպքերում թույլ էր տրված նույնիսկ գոյուլթյուն ունեցող բազաների վերացում: Գործնապես վատթար դրուլթյան և գյուղատնտեսուլթյան մեջ:

Գյուտարարների ընկերուլթյունն իր հերթին չի կազմակերպել եքսպերիմենտալ բազաների հաշվառումը, հսկողուլթյուն նրանց աշխատանքների վրա և պայքար նրանց ծավալման համար: Մինչդեռ, ներկա ետապում գյուտերի և տեխնիկական կատարելագործումների փորձնական որինակների պատրաստման և ստուգման կազմակերպումը գրեթե ունի ամենամեծ նշանակուլթյուն գյուտարարական գործում:

Այդ իսկ պատճառով, եքսպերիմենտալ բազաների խնդիրը, նրանց աճն ու գյուտարարների սպասարկումը խոշոր նշանակուլթյուն է տառնում: Անհրաժեշտ է ձգտել, վոր 1936 թ. խոշոր ձեռնարկներում ծախվլեն եքսպերիմենտալ բազաները և ապահովվեն համապատասխան միջոցներով:

Եքսպերիմենտալ բազաների և նրանց կողմից գյուտարարուլթյանը սպասարկելու խնդիրը անմիջականորեն շողակալվում է կոնստրուկտորական բյուրոները և նրանց կադրերը տեխնիկական նորուլթյուններ մշակելու համար ներդրալվելու հետ, ինչպես նաև տեխնիկական առաջարկներն իրացնելու գործում տեխպերսոնալի ախտիվուլթյունը բարձրացնելու հետ:

Անհրաժեշտ է, վոր տեխնիկական դեկավարուլթյունն ամեն կերպ խրախուսի առողջ տեխնիկական համարձակուլթյունը (ոխակը) և ուժեղացվի գյուտարարուլթյան հանդեպ ցուցաբերվող համառուլթյան և թերազնահասուլթյան դեմ մղվող պայքարը:

Մի շարք կոնկրետ դեպքեր՝ ցույց են տալիս, վոր տնտեսավարների մեջ գոյուլթյուն ունեցող համառուլթյունն ու տեխնիկական ռիսկի նկատմամբ անհիմն վախը դեռ լիովին վերացված չէ, միևնույն ժամանակ տեղի յեն ունենում խոշոր, վոչ պատճառաբանված ծախսեր իրենց չ'արդարացրած գյուտերի վրա, չնորհիվ լուրջ ստուգման բացակայուլթյան և նրանց կոնստրուկտիվ մշակումն անխնամ կազմակերպելուն:

դ) Համ Կ(բ) Կենտկոմի վորոշումը պահանջում էր մտցնել գիտա-հետազոտական ինստիտուտի աշխատանքների պլանում

առավել բարդ և խոշոր առաջարկներն ու գյուտերի հետադոտա-
կան մշակումը: Ինստիտուտների դերը գյուտարարական գոր-
ծում ներկայումս, մեր տեխնիկայի մակարդակի արագ բարձրաց-
ման պայմաններում, չափազանց աճել է: Ինստիտուտները
պետք է դառնան տեխնիկական նորույթների և կատարելագոր-
ծումների ղորեղ աղբյուրը, գյուտարարական կադրերի դարբ-
նոցը և գրավեն առաջատար տեղ՝ խոշոր գյուտերի իրացման
գործում:

Նրանց առաջ կանգնած այս խնդիրները գիտա-հետադոտա-
կան ինստիտուտները հիմնականում չեն կարողացել լուծել: Նոր
գյուտերի հայտեր ներկայացնելու գործում ինստիտուտների և
նրանց կողմից ընդգրկվող կադրերի դերը չափազանց անբավա-
րար է: Ինստիտուտների խնամքը կադրեր աճեցնելու և նրանց
աշխատանքի անհրաժեշտ պայմաններ ստեղծելու համար բոլորո-
վին չի համապատասխանում նրանց առաջադրվող պահանջներին:

ՅՆԻԻՄՍՇ-ի որինակները՝ գյուտարար ԿՈՊՐԺԻՎԻՆ «ՎՈ-
ԻՋԻՏԻ» մշակման գործում իրական ոգնությունն ապահովելու
համար, Գիմիական Մեքենաշինարարության ինստիտուտի ախ-
տիվ մասնակցությունը՝ գյուտարարներ՝ ԼԻՆՆԻԿԻ յեվ ԿՍՏՅԻ
եղեկորոմետալիզատորի իրացման համար առաջին դեռ կազմում
են բացառություն: Ինստիտուտներում հաճախ են լինում գյու-
տարարական առաջարկները մեռնելու դեպքեր, նայել ձգտում
մեկուսացնել գյուտարարին իր առաջարկի մշակումից: Անբա-
վարար ուղարկություն և դարձվում ինստիտուտի աշխատողնե-
րից գյուտարարական կադրեր աճեցնելու վրա:

Գյուտարարների Համամիութենական ընկերությունն յեվս
չի կարողացել ծավալել ինստիտուտներում գյուտարարական հա-
սարակայնության աշխատանքը:

յե) Տնտեսավարները, վորոնք ընկ. ՈՐՋՈՆԻԿԻՋԵՑԻ նախա-
ձեռնություններ ախտիվորեն մտել են ձեռնարկները շահալետ
դարձնելու համար տարվող պայքարի մեջ, լրիվ են գնահատում
գյուտարարության և ռացիոնալիզացիայի նշանակությունն այդ
գործում: Գյուտարարությունից ստացվող տնտեսումների հաշ-
վառումը կատարվում է անբավարար: Գյուտարարությունը և
ռացիոնալիզացիային ոժանդակելու համար Փոնդերի հատկացում-
ները կատարվում են վոչ լրիվ կերպով: Հաճախ տնտեսավարները
ձգձգում են այդ Փոնդերի ծախսումը, վորի հետևանքով ար-
դյունաբերության առանձին բնագավառներում մնում են չ'ծախս-

ված բաղամիլլիոն մնացորդներ, մինչդեռ տնտեսավարները
գանգատվում են, վոր գումարներ չունեն գյուտարարներին, եքս
պերիմենտալ աշխատանքները վարձատրելու և այլն: Լինում են
դեպքեր, վոր այդ գումարները ծախսվում են անորինական,
առաջին հերթին՝ տնտեսարմինների ավելորդ վարչական ապա-
րատի վրա:

Գյուտարարներին պրեմիաներ վճարելը կատարվում է նույն-
պես ուշացումներով և վոչ լրիվ:

դ) Ընկ. ՍՍՍՐԻՆԻ ցուցմունքը՝ դեպի տեխնիկան տիրապե-
տած կադրերը ուշադիր վերաբերմունք ցույց տալու և նրանց
աճեցնելու մասին՝ գյուտարարների նկատմամբ տնտեսարմին-
ների կողմից կենսագործվում է անբավարար. տնտեսարմիններում
գյուտարարական կադրերի հաշվառումը կազմակերպված չէ,
հազվադեպ դեպքերումն է տեղի ունենում արտագրություն
մեջ նրանց առաջին հերթին առաջ քաշելն, ուսուցման և գիտա-
հետադոտական ինստիտուտներ ուղարկելը չի ապահովվում
անհատալ և լրիվ խրախուսանքը լավագույն գյուտերի և տեխ-
նիկական կատարելագործումների համար, վորն անշուշտ կ'բարձ-
րացնե գյուտարարական ախտիվությունը: Չի կազմակերպ-
ված նայել վարչա-տեխնիկական պերսոնալի խրախուսանքը և,
վոր ավելի կարեորն է, -ցեխային (վարպետ, ցեխի պետ)
գյուտարարական նախաձեռնությունը և գյուտերն արագ կար-
գով իրացնելու կազմակերպելու համար:

Տնտեսարմինների կողմից դեպի գյուտարարություն ուշա-
գրություն դարձնելու ուժեղացումը և այդ թերությունների
վճարական վերացումը պետք է ցույց տա խոշոր ազդեցություն
գյուտարարության հետագա զարգացման վրա:

Գյուտարարական հասարակայնությունը և առաջին հերթին
ընկերության խորհուրդները ձեռնարկություններում պարտա-
վոր են տանել ամենօրյա ախտիվ պայքար այդ բացերի դեմ:
Դրանց առկայությունն անշուշտ վկայում է նայել գյուտարա-
րական հասարակայնության թույլ աշխատանքը, նրա անճարա-
կությունը մորլիզացիայի յենթարկել բոլոր ուժերն՝ անպա-
տասխանատվության դանդաղաչարժության և գյուտարարու-
թյունը թերազնահատելու մնացորդները հաղթահարելու համար:

6. Համկ(բ) Կենտկոմի վորոշումը նախատեսում էր Գյու-
տարարական Կոմիտե ստեղծելու անհրաժեշտությունը «գյու-
տարարական որդանների աշխատանքը արդյունաբերության մեջ,

տրանսպորտում և ժողովրդական տնտեսությունների բնագավա-
րում կապակցելու և համակարգելու նպատակով»:

Գյուտարարական կոմիտեյի կարևորագույն խնդիրն է հան-
դիսանում ինչպես ցույց է տրված ԽՍՀՄ Ժողկոմխորհի 1933
թ. հունվարի 17-ի վերջին մեջ «ձեռք առնել միջոցներ իր
ժամանակին իրացնել խոշորագույն գյուտերն ու տեխնիկական
կատարելագործումները»:

Այսպիսով, Կոմիտեն հանդիսանում է կառավարական որ-
գան, վորը համակարգում է գյուտարարական ամբողջ աշխա-
տանքը, հսկում է նրան և, առաջին հերթին, ակտիվ կերպով
աջակցում է կարևորագույն գյուտերի իրացմանը: Բացի այդ,
Կոմիտեն (Նորությունների բյուրոն) վարում է հեղինակներին
վկայականներ ու պատենտներ տալու գործը:

ա) Խոշոր նշանակություն ունի կոմիտեյի գործունեությունը
կարևորագույն գյուտեր ընտրելու և նրանց իրացման համար
միջոցներ ձեռք առնելու խնդրում:

Սակայն, 1934 և 1935 թ. թ. փորձը ցույց է տալիս, վոր
Կոմիտեյի կողմից չեն ստեղծված բոլոր անհրաժեշտ պայման-
ները նոր կարևորագույն գյուտերի ընտրության և նրանց իրաց-
ման ուղեբառով, գործնական կոնտրոլը կազմակերպելու համար:

Կոմիտեյի հաշվառման մեջ գտնվող գործերի ցուցակում չեն
գրանցված մի շարք խոշորագույն գյուտեր: Հաշվառման վերց-
րած գործերի շարժումը մի շարք դեպքերում ընթանում է չա-
փաղանց դանդաղ: Գործերի իրացման ընթացքի մասին Կոմի-
տեյում յեղած ինֆորմացիան հաճախ ստույգ չէ: Գյուտարար-
ների ընկերությունը պետք է ակտիվորեն լծվի կոմիտեյի այդ
աշխատանքներին և մոբիլիզացիայի յենթարկի հասարակայնու-
թյանը՝ ոգնելու կոմիտեյին իրացնելու այն գյուտերը, վորոնք
ճանաչվել են կարևոր և վոր թե մնա չեղող, ինչպես դա յեղել
է մինչ այժմ:

բ) Նորությունների բյուրոյի գործունեությունն առաջադրում
է խիստ և արժանի քննադատություն գյուտարարական լայն
չրջաններում և խորհրդային մամուլում: Նորությունների բյու-
րոն տեխնիկական նորությունները խրախուսող որդանից վերած
վել է մի որդանի, վորը ձեականորեն վորոշում է նորությունը
կամ, ավելի ձիշտ, փնտրում է գյուտարարական հայտերում
նմանություններ: Բացի այդ, Նորությունների բյուրոն մի շարք

դեպքերում հայտերի քննարկումը կատարում է անթույլատրելի
դանդաղություններով և չի կարողացել ստեղծել իր շուրջը բա-
վականաչափ հեղինակավոր երգարանների կուլեկտիվ:

գ) Կոմիտեյի աշխատանքում խոշոր բացը կայանում է նրա-
նում, վոր նա չի ապահովել մտցնելու գյուտարարական որենո-
գրություն մեջ անհրաժեշտ լրացումներ և փոփոխություններ,
թեև քննության ե առել այդ հարցը դեռ 1934 թ.: Ընկերու-
թյան կենտրոնադուրը ևս իր կողմից միջոցներ ձեռք չի առել
արագացնելու որենագրության վերանայման խնդրը, չնայած
նրա ակտուալ լինելուն:

Դ. Գյուտարարական հարցերի որենագրությունը հիմնվում
է «գյուտերի և տեխնիկական կատարելագործումների մասին»
կանոնադրության վրա, հաստատված կառավարության կողմից
1933 թվի ապրիլի 9-ին, ի վարդացումն վորի հրատարակված
է մի շարք առանձին որենքներ, ինչպես նաև Աշխատանքի և
Պաշտպանության Խորհրդին և տնտմարմիններին կից Գյուտա-
րարական կոմիտեյի հրահանգները:

Սոցիալիստական չինարարության հսկայական հաջողու-
թյունները, վորոնք ձեռք են բերված յերկրի կողմից հինգ տար-
վա ընթացքում, գյուտարարական գործի կազմակերպման վե-
րականուցումը, վոր կատարվել է կուսակցության և կառավա-
րության 1933 թ. վորոշումների համաձայն, ժողովրդատն-
տեսական պայմանների փոփոխությունը՝ առաջին հնգամյակի
հաղթական ավարտումով և յերկրորդ հնգամյակի առաջին յերեք
տարիների պլանների կատարումով—այս բոլորն ի մի վերցրած,
անհրաժեշտորեն թելադրում է վերանայել գյուտարարության
հարցերի մասին յեղած որենագրությունը:

ԱՌԱՋԻՆ—անհրաժեշտ է արմատապես փոխել «Գյուտարա-
րության որդանները» կանոնադրության II-րդ բաժինը և նրա
մի շարք կետերը—կուսակցության և կառավարության 1933 թ.
գյուտարարության Փունկցիոնալ որդանների վերացման և գյու-
տերի իրացման պատասխանատվությունը արտադրության ան-
միջական դեկավարների վրա դնելու մասին վորոշումը՝ գործ-
նականում կյանքի մեջ կիրառելու հարուստ փորձի հիման վրա:

ՅԵՐԿՐՈՐԴ.—կարիք է զգացվում վերանայել որենքի կողմից
աահմանված հեղինակներին վկայականներ տալու նորություն-
ների սկզբունքը, վորը ներկա պայմաններում պետք է ձկուն կեր-
պով կապակցվի տվյալ տեխնիկական նորության ոգտակար լինե-

լու սկզբունքի հետ սոցիալիստական շինարարության համար: Միաժամանակ փորձը պահանջում է հեղինակության պաշտպանում վոչ իրան գյուտերի նկատմամբ, վորոնք կարող են կատարվել արտադրական ճանապարհով, այլ և գյուտեր, վորոնք կայանում են յերկրի ուժերի կազմակերպման մեջ (որինակ՝ կարող է ծառայել ՄԻՋՈՒՐԻՆԻ աշխատանքները, նոր բուժական միջոցների հայտնագործում և այլն):

ՅԵՐՐՈՐԴ,—պրակտիկական թելադրում է գյուտարարի և տեխնիկական կատարելագործումներ առաջարկողների խրախուսանքի փոփոխման նպատակահարմարությունը: Անհրաժեշտ է պարզացնել գյուտերի և տեխնատարելագործումների համար հատկացվող պրեմիաների հաշվարկման կարգը: Նպատակահարմար է նաև իրադրոծել տրեստեսավարների և տեխպերսոնալի նյութական շահագործվածություն սկզբունքը՝ գյուտերի արագ և հաջող ստուգման ու պրակտիկ իրացման գործում:

ՉՈՐՐՈՐԴ,—գյուտերից ստացված տնտեսական եֆֆեկտը պետք է պարզ արտացոլվի ձեռնադիրների արդիֆինսլաններում և հանդիսանա խորհրդային գյուտարարության շահավետության համար մղվող պայքարի գորեղ միջոցը:

ՀԻՆԳԵՐՈՐԴ,—ավելի պարզորոշ որենադրական կարգավորման կարիք է գլու՜մ խորհրդային գյուտերի արտոնագրումը արտասահմանում, խորհրդային տեխնիկայի հսկայական վերելքի կապակցությամբ մի շարք մարդերում, վորն անցնում է առաջավոր կապիտալիստական յերկրներից և տալիս է արտասահմանին անծանոթ նորություններ:

Այդ հիման վրա, Ընկերության Կենտխորհրդի կողմից պետք է մշակվեն և ներկայացվեն Կառավարությանը կոնկրետ մատերիալներ և առաջարկներ տվյալ հարցի նկատմամբ:

8. ՀամԿ(բ)Կ Կենտկոմի վորոշումը մեծ դեր է հատկացրել պրոֆմիություններին՝ հսկելու գյուտարարության զարգացմանը և գյուտարարական ու ռացիոնալիզատորական առաջարկների իրացմանը և դրել է պրոֆմիությունների վրա մասսայական գյուտարարական կազմակերպության— Գյուտարարների Ընկերության ղեկավարությունը:

Ծանոթանալով խոշոր ձեռնարկություններում գյուտարարության գրություն հետ, պարզվում է, վոր պրոֆմիությունական որդանները աշխատանքի այդ բնագավառին անբավարար ուշադրություն են նվիրում: Գործարկումները մեծ մասամբ չեն ապա-

հովում սխտեմատիկ հսկողությունը ձեռնարկությունների գյուտարարության դրություն, գյուտարարական և ռացիոնալիզատորական առաջարկներ իրացման վրա, անբավարար են ղեկավարում Ընկերության խորհրդի աշխատանքը և հսկողություն չեն սահմանում նրա վրա:

ՀԱՄԽ—ը և նրա յերկրային ու մարդային ֆարմինները վերջին շրջանում նույնպես չեն ապահովել Ընկերության ղեկավարությունը և ոժանդակությունը, վորպիսի հանգամանքը նրա անբավարար աշխատանքի պատճառներից մեկն է հանդիսանում:

Ընկերությունը և առաջին հերթին Ընկերության խորհուրդները ձեռնարկներում պետք է միջոցներ ձեռք առնեն, վոր պարբերաբար լավեն ղեկուցումներ գործարկումների նիստերում խորհուրդների աշխատանքների ու գյուտարարության գրության մասին ձեռնարկներում պրոֆմիությունական կազմակերպությունների հետ միասին աշխատանքներ տանել առաջարկների կենսագործման համար հսկողություն սահմանելու և ապահովելու նրանց հետ մշտական կենդանի կապը:

9. Գյուտարարության մեջ յեղած հաջողություններն առաջին հերթին ապահովված են Կուսակցական կազմակերպությունների ղեկավարությամբ և ոժանդակությամբ: Գործարաններից մեծ մասում Կուսակցական Կոմիտեները ռեզուլյար կերպով զբաղվում են գյուտարարական շարժման խնդիրներով, մորիլիզացիայի յեն յենթարկում ուշադրությունը դեպի այն և ապահովում են Ընկերության կազմակերպության ամենորյա ղեկավարությունն ու ոժանդակությունը:

Գյուտարարության զարգացման գործում խոշոր և ակտիվ դեր են խաղում կուսակցական յերկրային և մարդային կազմակերպությունները (Լենինգրադի մարդ, Գորկովսկի և Հյուսիսային յերկիրները և մյուս.) ուր այդ խնդիրներին Յերկրային կոմիտեների գործունեության մեջ մեծ ուշադրություն է նվիրվում:

ՀամԿ(բ)Կ Կենտկոմի վորոշմամբ Կոմյերիտմիության առաջ խնդիր էր դրված «ապահովել ակտիվ մասնակցությունը գյուտարարական գործերում բյուրոկրատիկ և քաջշունչների դեմ մղվող պայքարում, ինչպես նաև լայն կերպով ներգրավել յերիտանսարդությունը գյուտարարական բլիշների աշխատանքներում և գյուտերի իրացման որդաններում»: Կոմյերիտմիությանն այդ գործում պատկանում են խոշոր ծառայություններ, Կոմյերիտ-

միութեան շարքերից դուրս են յեկել նրա կողմից դատարարակ-
ված բազմաթիվ յերիտասարդ գյուտարարներ և ռացիոնալիզա-
տորներ:

Սակայն, վերջին շրջանում Կոմյերիտմիութեան աշխատանքն
այդ բնագավառում զգալիորեն թուլացել է: ՀԱՄԼԿՅՅՄ ԿԿ-ի
կողմից տրված է դերեկտիվ գյուտարարութեան աշխատանքում
և ձեռնարկութեաններում բանվորական առաջարկների իրացման
ստուգմանը Կոմյերիտմիութեան քանակացութեանն ուժեղացնե-
լու մասին:

Ընկերութեան բոլոր կազմակերպութեանները պարտավոր են
մոբիլիզացիայի յենթարկել իրենց ուղադրութեանը ՀամԼԿՅՅՄ
ԿԿ-ի այդ դերեկտիվների շուրջը և ամեն կերպ ամրացնել իրենց
կապը Կոմյերիտմիութեան հետ՝ բանվորական առաջարկների
իրացման ստուգման, քաջքուսների ու բյուրոկրատիզմի դեմ
մղվող պայքարի գործում, ինչպես նաև ուժեղացնել Ընկերու-
թեան շարքերը Կոմյերիտականներին ներգրավելով:

10. Գյուտարարական հասարակայնութեանը չեւ կարողա-
նում բավականաչափ լայն կերպով ոգտագործել դատախազու-
թեանը՝ գյուտերի, կատարելագործումների և բանվորական
առաջարկների իրացման համար կուսակցութեան և կառավարա-
կան որդանների դերեկտիվների կատարման սխտեմատիկ հսկո-
ցութեան սահմանելու գործում:

11. ՀամԿ(բ)Կ-յենտկոմի վարչումը պահանջում եւ առա-
հովել գյուտարարական խնդիրների լիակատար լուսաբանումն
ամբողջ մամուլում յեւ համապատասխան գրականութեան հրա-
տարակումը:

Լրագրերը մշտապես մեծ ուղադրութեան են նվիրում առան-
ձին կոնկրետ գյուտերին և նրանց պայքարը գյուտերի նկատմամբ
ցուցաբերվող քաջքուսների դեմ յեղել և չափազանց մեծ: Դրան
դուգընթաց, գործարանային մամուլը դեռ լրիւ չափով չի ապա-
հովել ձեռնարկութեանների գյուտարարական աշխատանքների
սխտեմատիկ լուսաբանումը:

Ընկերութեան կենտրոնադուրն իր հերթին չի կազմակերպել
գյուտարարական հարցերի շուրջը պարբերական մամուլի սխ-
տեմատիկ ինֆորմացիան և վոչ մի աշխատանք չի տարել ստեղ-
ծելու գյուտարարական կադրերի համար անհրաժեշտ գրականու-
թեան:

12. Կոնֆլիկտային հանձնաժողովների աշխատանքի պրակ-

տիկան ձեռնարկութեաններում և տնտմարմիններում վերջին
շրջանում յեղել է ակնահայտ անբավարար: Կոնֆլիկտային հանձ-
նաժողովներում գործերը, իբրեւ կանոն ձգձգվում են անթույլատ-
րելի կերպով յերկար, ձեռնարկութեանների կոնֆլիկտային
հանձնաժողովների վորոշումները շատ դեպքերում բողոքարկ-
վում են վերադաս տնտմարմիններում, վորպիսի հանգամանքը
հաճախ տեղիք է տալիս քաջքուսի: Կոնֆլիկտային հանձնաժո-
ղովների դեկավարութեանը թե գյուտարարական կոմիտեյի և թե
քաղխորհրդների կողմից միանգամայն անբավարար է: Անհրա-
ժեշտ է վերակառուցել կոնֆլիկտային հանձնաժողովների աշխա-
տանքն այն ուղղութեամբ, վոր ապահովի նրանց արագ, հստակ
աշխատանքը և խնդիրների վերջնական լուծումը նախնական ինս-
տանցիայում:


III. ԳՅՈՒՏԱՐԱՐՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆԳԸ

13. ՀամԿ(բ)Կ-յենտկոմի վորոշմամբ գյուտարարների Հա-
մոմիութենական Ընկերութեան առաջ դրված է յին հետեյալ
խնդիրները. — «Հասարակական ինքնագործունեյութեան զարգաց-
ման, աշխատանքի կոլլեկտիվ մեթոդների և հասարակական կոն-
տրոլի դժով, ամեն տեսակի կատարելագործումներ յեւ գյուտեր
իրացնելու համար մասսայական ձեռնարկումներ անցկացնելու
գործում»:

Ընկերութեան այդ խնդիրները մինչև որս չի լուծել յեւ նրա
1934—1935 թ. թ. աշխատանքը յեղել է միանգամայն անբավա-
րար:

14. Ընկերութեան քանակական աճը, վորի անդամների թիւը
կենտրոնադուրն կողմից 1933 թվի վերջին հաշվվում եւ 800 հազար
մարդ, չեւ ուղեկցվում համապատասխան կազմակերպչական
ամրացմամբ և նրա գործունեյութեան վորակական ցուցանիշների
աճով:

1934 թ. անցկացրած ստուգումը ցույց տվեց, վոր փաստորեն
Ընկերութեանն ունի 500 հազար անդամ: Սակայն անդամների
այդ քանակի զգալի մասն եւ ֆորմալ կերպով ունի անդամատոմ-
սեր, Ընկերութեան մեջ աշխատանք չի տանում և նույնիսկ չի
վճարում անդամավճարներ: Առանձին ձեռնարկութեանների
ստուգումը պարզել է Ընկերութեան անդամների զգալի կրճա-
տում:



Այս բոլորը հետևանք է Լնկերության ղեկավարության թխալների և նրա աշխատանքի անբավարար կազմակերպման:

Լնկերության աշխատանքի անկյունաքարում դրված չի յեղել անդամների ինքնազործունեության զարգացումը, այլ դա մեծ մասամբ փոխարինվում էր ուռճացող վարձու ապարարատով:

Լնկերության կազմակերպություններում խախտվում էյին խորհրդային դեմոկրատիայի հիմնական սկզբունքները: Լնկերության խորհուրդների պարտադիր ընտրողականության փոխարեն ծաղկում էյին նշանակումները, չեղանցվում անդամակցական մասսայի առաջ Լնկերության ղեկավար որդանների հաշվետվությունը: Լնկերության հասարակական տնտեսությունը, ինչպես ցույց տվեց մի շարք կազմակերպությունների ստուգումը, գտնվում էր խայտառակ դրության մեջ:

Լնկերության կենտրոնաօրդը և նրա յերկրային ու մարդային խորհուրդները վոչ միայն ամենորյա պայքար չեյին մղում Լնկերության աշխատանքի հասարակական սկզբունքները պահպանելու համար, այլ իրենք էյին խախտում այդ: Լնկերության կենտխորհրդի 1934—1935 թ. թ. աշխատանքը վերջնականապես կորցրեց հասարակականության բնույթն ու նշանակությունը և փոխարինվել էր Լնկերության ղեկավարների բյուրոկրատիկ հրամանատարությամբ: Համազումար չեղ գումարվում մոտ չորս տարի յիս կենտխորհրդի պլենումը—մեկ ու կես տարվանից ավելի: Նախագահության կազմում (15 հոգի) կար միայն յերկու գյուտարար: Սակայն նախագահության այդ կազմը յեյս գրեթե չեղ հաշվաքվում: Լնկերության կենտխորհուրդը չի կարողացել ստեղծել իր շուրջը գյուտարարական լայն ակտիվ և ոգտագործել իրեն ոգնելու համար, ամբողջ աշխատանքը հիմնականում հիմնված էր ապարարտի վրա, վորն իր կազմով միանգամայն անբավարար էր: Շրջանների կենդանի ղեկավարությունը փոխարինված էր դատապարտված գրասենյակային—բյուրոկրատիկ մեթոդներով: Մամուլը, ուղիոն, Կինոն—մասսաների կազմակերպման ու պրոպագանդայի այդ գորեղ միջոցները—գրեթե ոգտագործված չեն յեղել Լնկերության կենտխորհրդի կողմից:

«ԳՅՈՒՏԱՐԱՐ» ամսագիրը, գրկված լինելով կենտխորհրդի ղեկավարությունից, վեղ էր ածվել հեղինակություն չունեող գերատեսչական նեղ որդանի, ընդունակ չլինելով ծավալել Լնկերության մեջ ինքնաքննադատությունը և գնալ գյուտարարական հասարակական շարժման առաջից:

Լնկերության զգալի գումարները ծախսվում էյին անեպատակ և առաջին հերթին գնում էյին ապարարտի պահպանման ու վարչատնտեսական նպատակների համար: Տեղի յեն ունեցել հասարակական գումարների ուղղակի չույլման դեպքեր:

15. Լնկերության ղեկավարությունը չի ապահովել Լնկերության բոլոր կազմակերպությունների գործնական ամենորյա պայքարը ՀամԿ(Բ)Կ Կենտկոմի 1930 թ. հոկտեմբերի 26-ի վորդումը կենսագործելու համար:

Միանգամայն անբավարար է կենսագործվել Լնկերության հիմնական ֆունկցիաներից մեկը—«հասարակական կոնտրոլն ամեն տեսակ կատարելագործումների և գյուտերի առաջ շարժման և իրացման գործում»:

Ստուգման յենթարկված մի շարք ձեռնարկություններում արձանագրված է քննության չառնված և չիրացված բանվորական առաջարկների աճ: Գործարանային խորհուրդները չեյին ապահովում առաջարկների իրացման սխտեմատիկ հասարակական ստուգումը:

Լնկերության Կենտխորհուրդը չի գլխավորել այդ աշխատանքը և ինքը վերջին տարիների ընթացքում գյուտաշխատանքների կազմակերպման վոչ մի խորացված ստուգում չի անցկացրել տնտմարմիններում, չնայած այդ գործի անբարեհաջողության մասին յեղած ահագանդերին (Հողժողովումատ, Կարի արդյունաբերության գլխավարչություն և այլն): Լնկերության Կենտխորհուրդը չի ունեցել հաշվառման վերցրած կարևորագույն գյուտերի կայուն ցուցակը և ամենեկին չի մասնակցել կառավարության կողմից կարևորագույն ճանաչված գյուտերի իրացման կոնտրոլին:

16. 17-րդ կուհամագումարի վորոշումների կենսագործման համար պայքարը ժողովրդական տնտեսության վճռական ձյուղերում գյուտերը արմատացնելու գործում Լնկերության կողմից ծավալված է չափաղանց թույլ:

Լնկերության ղեկավար որդանները չեն կազմակերպել գյուտարարական հիմնական կադրերի հաշվառումը և ուսումնասիրումը, չեն անցկացրել նրանց մորիլիցային ակտուալ ժողովրդատնտեսական ինդիքների լուծման և գյուտարարության թեմատիկ պլանավորումը զարգացնելու համար: Կոնկրետ գյուտերի ուսումնասիրությունը և նրանց սկզբից մինչև վերջը առաջ շարժման համար ակտիվ մասնակցությունը դրված չեն յեղել Լնկե-

բուժյան կազմակերպությունների ուղադրության կենտրոնում:

Տեխնիկա-իրավական կոնսուլտացիայի խնդրին բավարար ուղադրություն չի դարձված, իսկ Լնկերության կենտրոնի հրավերը այդ բոլորովին վերացված է յեղել:

Գրեթե վոչինչ չի արված գյուտարարական և ռացիոնալիզատորական պրոպագանդայի և աշխատանքի կոլեկտիվ մեթոդները արմատացնելու բնագավառում:

Անբավարար աշխատանք է տարված գյուտարարական կադրերի աճեցման ու քաղաքական դաստիարակման գծով: Գյուտարարները և ռացիոնալիզատորները ուսուցումը բնավ չի յեղել ծավալված և այդ նպատակի համար բաց թողնված գումարները չեն ծախսվել:

Լնկերության անդամների սոց-կենցաղային ողնությունը և կուլտուրական սպասարկումը, չ'նայած զգալի գումարների ծախսման, կազմակերպված է յեղել միանգամայն անբավարար:

Լնկերության ստորին կազմակերպությունների փորձը սիս-տեմատիկ կերպով չէր ուսումնասիրվում և չի կազմակերպված Լնկերության գործարանային լավագույն խորհուրդների աշխատանքի մասնաշաղկանացումը: Լնկերության կենտրոնի հրավերը չի զլխավորել պայքարը՝ ամրացնելու Լնկերության կազմակերպությունների հեղինակությունը ձեռնարկություններում, գործարաններում, ՄՏԿ-ներում, կոլտնտեսություններում և խորհուրդ-տնտեսություններում:

Լնկերության կենտրոնի հրավերը ներկա տարվա առաջին կեսի վերջից ձեռնարկել է Լնկերության աշխատանքի վերակառուցմանը և նշված թերությունների վերացմանը:

Սակայն, ձեռնարկած միջոցառումները հանդիսանում են խոշոր գործի սկիզբը միայն, վորի համար կենտրոնի հրավերը 5-րդ պլենումը պետք է մոբիլիզացիայի յենթարկի Լնկերության բոլոր կազմակերպությունները:

IV. ԳՅՈՒՏԱՐԱՐՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

17. Գյուտարարների Լնկերության 1935/36 թ. հիմնական խնդիրը հանդիսանում է կազմակերպել գյուտարարական և ռացիոնալիզատորական մասսաները՝ կատարելու համար Համի(բ)Կ Կենտկոմի 1930 թ. հոկտեմբերի 26-ի վորոշումը «մասսայական բանվորական գյուտարարության մասին» և գյուտարարությունը

կազմակերպելու խնդիրների մասին ցուցմունքները, վորոշեք տրված են կուսակցության «Դոնբասի ածխարդյունաբերության աշխատանքի մասին» և «յերկաթուղային տրանսպորտի մասին» 1933 թ. վորոշումներում:

Նշված վորոշումներով տրված դիրեկտիվները խորհրդային չինարարության զարգացման մասին ունեն վճռական նշանակություն՝ գյուտարարական գործը բարձր աստիճանի բարձրացնելու և նրանց լիակատար կենսագործման համար տարվող պայքարը պետք է հանդիսանա Լնկերության բոլոր կազմակերպությունների աշխատանքի հիմնաքարը:

Այդ պայքարի հիմնական ձևերից մեկը հանդիսանում է Համի(բ)Կ Կենտկոմի վորոշմամբ ընկերության վրա դրված «բոլոր տեսակի կատարելագործումների և գյուտերի առաջարկման և իրացման գործում հասարակական հսկողության» պարտավորությունների կենսագործելը: Այս խնդրի լուծումը պահանջում է ուժեղացնել Լնկերության կազմակերպությունների և առաջին հերթին Լնկերության ձեռնարկությունների խորհուրդների կապը կուսակցական, կոմյերիտական և պրոֆմիութենական կազմակերպությունների հետ:

18. Լնկերության 1935-36 թ. աշխատանքի ղեկավարող հենակետը հանդիսանում է ընկ. ՍՏԱԼԻՆԻ՝ տեխնիկական տիրապետած կադրերի աճեցման, կադրերի մասին խնամք տանելու ցուցմունքի կենսագործումը: Յեղնելով դրանից, Լնկերությունը պարտավոր է 1936 թ. առաջին յետամսյակում կազմակերպել իր անդամների կազմի ստուգումը, ներդրավել Լնկերության մեջ բոլոր իսկական գյուտարարական և ռացիոնալիզատորական կադրերը և ակտիվացնել նրանց ինքնագործունեությունը: Միաժամանակ Լնկերության նպատակն է կեղծ գյուտարարներին, զրուփողներին ու գյուտարարական շարժման մեջ խցկվածների մերկացումն ու նրանց վտարումը Լնկերության շարքերից:

Խորհրդային գյուտարարի և ռացիոնալիզատորի կոչումը հանդիսանում է պատվավոր և բարձր կոչում: Այդ կոչման իրավունքը կարող են ստանալ միայն խորհրդային տեխնիկայի կատարելագործման բնագավառում ցուցադրած իրական ծառայության դեպքում:

Լնկերության պարտավորությունն է՝ շրջապատել առանձին խնամքով և ուղադրությամբ գյուտարարական լավագույն կադրերը, ստեղծել միանգամայն նպաստավոր պայմաններ նրա աճ-

ման համար և իր ամբողջ գործունեությունն ուղղել առաջին հերթին կենդանի մարդուն—գյուտարարին և ռացիոնալիզատորին ոգնելու համար, գյուտարարական ռացիոնալիզատորական մաս-
-աների քաղաքական—դաստիարակչական աշխատանքների վրա:

Դրա համար մասնավորապես անհրաժեշտ է.

ա) Վճռականորեն փոխել Լնկերության բոլոր կազմակերպու-
-թյունների աշխատանքի բովանդակությունը, դարձնելով նրանց գործունեության անկյունաքարը գյուտարարական և ռացիոնա-
-լիզատորական կադրերի ուսումնասիրումն ու հաշվառումը, նրանց աճման ոժանդակելը, ակտուալ—տեխնիկա—արտադրական խնդիր
ների լուծման համար նրանց մոբիլիզացիայի յենթարկելը, կոն-
-կրետ գյուտերի և տեխնիկական կատարելագործումների իրաց-
-ման համար սխտեմատիկ հսկողություն ու ոգնություն ցույց
տալը:

բ) 1936 թ. աշխատանքների պլանում նախատեսել գյուտա-
-րարների և ռացիոնալիզատորների մեջ քաղաքատիարակչական
աշխատանքների ծավալումը, Լնկերության անդամների տեխնի-
-կա—իրավական կոնսուլտացիան, յերիտասարդ տաղանդավոր
գյուտարարների ուսուցումը, Լնկերության անդամների կուլ-
-տուրական աճին ոժանդակելու և սոց—կենցաղային ոգնությունը
լայն ծավալելու դժուր:

Լնկերության բոլոր կազմակերպություններին անհրաժեշտ է
ուժեղացնել ուշադրությունը կին—բանվորուհիներին և կոլտոտե-
-սուհիներին ռացիոնալիզատորական և գյուտարարական աշխա-
-տանքներում ներգրավելու և նրանց ամենալայն ոգնություն
ցույց տալու համար:

19. Գյուտարարների Լնկերության հետագա զարգացումը
չի կարելի պատկերացնել առանց Լնկերության ամբողջ կյանքի
և ստախանովյան շարժման մեջ ամուր կապ ստեղծելու:

Ստախանովյան մեթոդների տիրապետումը, ստախանովական
ների աշխատանքի փորձի ուսումնասիրումը պետք է բարձրացնի
գյուտարարական և ռացիոնալիզատորական աշխատանքի վորակը:

Ստախանովյան շարժումը ստեղծում է հզոր բազա ռացիո-
-նալիզատորական և գյուտարարական առաջարկները բազմաա-
-լու համար, ստախանովականների շարքերը կ'հանդիսանան զո-
-րեղ աղբյուր՝ գյուտարարների—ռացիոնալիզատորների նոր կող-
-բեր առաջ քաշելու համար:

Գյուտարարների Լնկերությանն անհրաժեշտ է.

ա) Գլխավորել ստախանովյան շարժումը գյուտարարական
և ռացիոնալիզատորական մասսաների մեջ:

բ) Կազմակերպել ստախանովականների ներգրավումը գյու-
-տեր և տեխնիկական կատարելագործումներ ստեղծելու աշխա-
-տանքում և ծավալել բոլոր միջոցառումները՝ նրանց այդ գոր-
-ծում ամեն կերպ ոգնություն ցույց տալու համար:

գ) Կազմակերպել գյուտարարների և ռացիոնալիզատորների
միատեղ աշխատանքը ստախանովականների հետ՝ աշխատանքի
արտադրողականության և արտադրության լավացման համար
մղվող պայքարը բարձրացնելու համար:

20. Լնկերության կարևորագույն խնդիրը 1935/36 թ. հան-
-դիսանում է գյուտարարների և ռացիոնալիզատորների մոբիլի-
-զացիան՝ ղուրս դալ պայքարի կուսակցության 17—րդ համագու-
-մարի վորոշումների յեմ 1936 թ. ժողովրդական տնտեսության
պլանը կատարելու համար, նոր առաջարկներ մտցնելու միջոցով,
վորոնք լուծելու յեն կուսակցության 17—րդ համագումարի կող-
-մից դրված խնդիրները «յերկրորդ հնգամյա պլանի» և 1936 թ.
պլանի մասին, ինչպես նաև յեղած գյուտերն արմատացնելու
միջոցով:

Լնկերության ուշադրությունը պետք է ուղղված լինի առա-
-ջին հերթին գյուտարարությունը և ռացիոնալացման զարգացու-
-մը ժողովրդական տնտեսության առաջատար ճյուղերում. ամուխ
մետաղ, եներգետիկա, տրանսպորտ, մեքենայինարարություն
և շինարարություն:

Ցերկրի պաշտպանության ամրացումը պահանջում է Լնկե-
-րության բոլոր կազմակերպություններից ուժեղացնել իր ուշա-
-դրությունը դեպի պաշտպանողական գյուտարարությունը և
ուղղել գյուտարարական միտքը կարմիր բանակի և նավատոր-
-միդի ուղղման տեխնիկայի կատարելագործմանը:

Ձգալի չափով պետք է ուժեղանա գյուտարարական աշխա-
-տանքը թեթև արդյունաբերության մեջ: Վերջապես Լնկերութ-
-յունը պետք է վճռական պայքար մղի կազմակերպչական թե-
-րությունների և գյուղատնտեսության մեջ գյուտարարության
հետ մշակու դեմ:

21. Լնկերության կազմակերպությունները պետք է ամեն
կերպ ձգտեն ուժեղացնելու իրենց ուշադրությունը դեպի ձեռ-
-նարկությունների և տնտմարմինների գյուտարարությունը,
վերջնականապես վերացնեն ֆունկցիոնալիան և ձգտեն, վոր

գյուտարարական գործ անմիջականորեն դեկավարի վարչա-տեխ-նիկական անձնակազմը, առաջին հերթին՝ առաջարկների ցեխա-յին, արագ և պատասխանատու քննարկումը, բարելավի եկապեր-տիզացի վորակը և պլանային արագ իրացումը:

Ընկերության կազմակերպությունները պարտավոր են հե-տևել ռացիոնալիզացիային և գյուտարարությանն ոժանդակող ֆոնդերի կազմակերպմանը, նրանց ճիշտ ծախսմանը, ինչպես նաև համառ կերպով ձգտել, լոր ժամանակին վճարվեն գյու-տարարական պրեմիաները և խրախուսել լավագույն գյուտա-րարին ու ռացիոնալիզատորին:

Անհրաժեշտ է կազմակերպել կոնֆլիկտային հանձնաժողով-ներում գտնվող Ընկերության ներկայացուցիչների աշխատանքի ստուգումը և այդ ստուգման հիման վրա միջոցառումներ ձեռ-նարկել հանձնաժողովների աշխատանքը բարելավելու համար:

22. Ընկերության հերթական խնդիրը հանդիսանում է ծա-վալել պայքար ուժեղացնելու եկապերի մեծացումը ձեռ-նարկություններում և նրանց կողմից գյուտարարական աշխա-տանքների սպասարկումը: Անհրաժեշտ է կազմակերպել եկապերի մեծացումը բաղանների ծավալման հասարակական ոժանդակություն, կոնտրոլը նրանց աշխատանքի վրա և տանել վճարական պայքար՝ նրանց թուլացնելու բոլոր տեսակի փորձերի դեմ: Ընկերության կազմակերպությունները պետք է կարգավորեն մշտական կապը կոնստրուկտորական բյուրոների հետ և ամեն կերպ մասնակից դարձնել կոնստրուկտորներին գյուտարարների աշխատանքներին:

23. Ընկերության կենտրոնացված ուժեղացնել կապը գիտա-հետազոտական ինստիտուտների հետ, ձգտելով մտցնել նրանց պլաններում խոշոր գյուտերի և ռացիոնալիզացիաների ստուգումը և մշակումը, ներգրավելով այդ աշխատանքներում լավագույն գյուտարարներին, մոբիլիզացիայի յենթարկելով ինստիտուտների կոլլեկտիվները հիմնական գյուտարարական պրոբլեմներ լուծե-լու և նրանց Ընկերության աշխատանքներում ներգրավելու հա-մար: Անհրաժեշտ է ձգտել ուժեղացնելու և կազմակերպելու հիմնական ինստիտուտներին կից խոշոր փորձնական բաղաներ (կիսաօրծարանային տիպի) նոր գյուտերի նմուշները պատրաս-տելու և ստուգելու համար, ինչպես նաև ստեղծելու ինստիտուտ-ներում հատուկ ֆոնդեր խոշոր առաջարկները և գյուտերն իրա-ցնելու համար:

24. Ընկերության կենտրոնացված յերկու ամսվա ընթացքում

մշակել հաշվի առնելով տեղերի փորձը, կոնկրետ առաջարկներ գյուտարարության որենսդրության մեջ անհրաժեշտ փոփոխու-թյուններ ու լրացումներ մտցնելու համար և ներկայացնել կա-ռավարությանն ի քննություն:

25. Ընկերության կենտրոնացված ձեռք առնել միջոցներ, վորպեսզի համապատասխան տնտեսական արդյունքներ ստեղծեն գյուտա-րարության թեմատիկ պլաններ 1936-37 թ. թ. համար և սոց-պատկերների մշակումը ձեռնարկություններում: Ընկերության կազմակերպությունները պետք է ապահովեն այդ սոցպատկեր-ների մշակումը և կատարումը, առանձնահատուկ ուշադրությոնը դարձնելով աշխատանքի կոլլեկտիվ մեթոդների լայնացման վրա:

26. Ընկերության աշխատանքում կոմյերիտմիության մաս-նակցության ուժեղացումը պետք է խոշոր դեր խաղա գյուտա-րարական գործի բարելավման համար: Անհրաժեշտ է կազմա-կերպել կոմյերիտմիության մասնակցության լայն ներգրավումը Ընկերության անդամների շարքերը, ուժեղացնել կոմյերիտմիու-թյան և ԹԵԽԼ հեծելազորի մասնակցությունը բանվորական առաջարկների ու գյուտերի իրացման ստուգման գործում և բյուրոկրատիզմի ու քաշքշուկների դեմ տարվող պայքարում:

ՀամԼԿՑԵՄ կազմակերպության ոժանդակությամբ կարգա-վորել մանկական գյուտարարության կազմակերպումը:

27. Ընկերության կազմակերպությունները պետք է ձգտեն, վոր կենտրոնական և տեղական մամուլի եջերում սխտեմատի-կաբար լուսարանվեն գյուտարարության խնդիրները, ցուցադր-վեն գյուտարարական աշխատանքի լավագույն նմուշները և հայտնաբերվեն գյուտերի և առաջարկների իրացման գործում տեղի ունեցող բյուրոկրատիզմի ու քաշքշուկների դեպքերը:

Ընկերության կենտրոնացված ուժեղացնել «ԳՅՈՒՏԱՐԱՐ» ամսագրի ղեկավարությունը և դարձնել այն գյուտարարական հասարակայնության մարտական ղեկավար ուղանք:

28. Գյուտարարական կենտրոնական մշտական ցուցահան-դեսը, դեպի նա ցուցադրած կատարյալ անուշադրության հետ-ևանքով վերածվել է թանգարանի՝ անշատ և իր զգալի մասում աշխատանքները կորցրած առարկաներով (եկապնատնե-րով), վորոնք վորջնով չեն արտահայտում խորհրդային գյու-տարարության վիճակն ու դինամիկան: Անհրաժեշտ է 1936 թ. ավարտել Ընկերության կողմից սկսած ցուցահանդեսի վերա-կառուցումն ապահովել լայնացումը: Ցուցահանդեսը լրիվ չափով

պետք է արտաքսի խորհրդային գյուտարարության գերջին նվաճումները ժողովրդական տնտեսության հիմնական ճյուղերում, պրոպագանդայի յենթարկի գյուտարարության հաջողությունները և նպաստի արմատացնելու նորանոր գյուտեր՝ նրանց տեխնիկական և տնտեսական շահավետության տեսակետից: Միաժամանակ Լենկերուժյան կենտրոնացումը պետք է ապահովի մի շարք գյուտարարական ճյուղային ցուցահանդեսների ստեղծումը Միության խոշորագույն արդյունաբերական և գյուղատնտեսական կենտրոններում, ինչպես նաև կադմակերպել տղնամարմինների հետ միասին ժողովրդական տնտեսության տեսակետից կարևորագույն գյուտերի կոնկրետ:

29. Լենկերուժյան առաջ կանգնած խնդիրների իրականացումը կարող է ապահովել միայն Լենկերուժյան աշխատանքների ներքևից մինչև վերևը վճռական վերակառուցման բաղադրի հիման վրա և նրա կազմակերպչական ամրացմամբ:

Լենկերուժյան կազմակերպչական վերակառուցման հիմքում պետք է դրված լինի հետևյալը.

ա) Ամրացնել Լենկերուժյան անդամների հասարակական ինքնագործունեությունը, յուրաքանչյուր անդամի պարտադիր ակտիվ մասնակցությունը Լենկերուժյան աշխատանքներում:

բ) Անչեղ կիրառել Լենկերուժյան բոլոր կազմակերպություններում խորհրդային դեմոկրատիայի սկզբունքները. Լենկերուժյան բոլոր որդանների ընտրողականությունը, անդամակցական մասսայի առաջ հասարակական հաշվետվություն տալը և այլն:

գ) Մինիմումի հասցնել Լենկերուժյան վարձու ապարատը՝ ի հաշիվ նրա գործունեության հասարակական ձևերի ուժեղացմանը:

դ) Լրիվ չափով կենսագործել կենտրոնացումի 4-րդ պլենումի կողմից սահմանած Լենկերուժյան կազմակերպչական կառուցվածքը:

յ) Լենկերուժյան խորհուրդները պետք է լիովին վերացնեն իրենց կազմակերպությունների «ընդհանուր» և վերացական դեկավարումը և ապահովեն կոնկրետ դեկավարությունը, հիմնված ստորին մարմինների հետ կենդանի կապ հաստատելու վրա, իր գործի տեխնիկան ճանաչելու և ուսումնասիրելու վրա:

զ) Ապահովել Լենկերուժյան բոլոր կազմակերպություններում կուսակցության և կառավարության, ինչպես նաև Լենկերուժյան դեկավար մարմինների վորոշումների կատարման սխեմատիկ և

մանրադնին ստուգումը, նույնպես և ամրացնել ընկերության մեջ կարգապահությունը:

ե) Ուժեղացնել Լենկերուժյան բոլոր կազմակերպություններում ինքնաքննադատությունը, նույնպես և սոցիալիստական քրեակցության ու հարվածայնության հետագա զարգացումը:

բ) Կազմակերպել փորձի լայն փոխանակում ընկերության կազմակերպությունների միջև, հայտնաբերել և մասսայականացնել աշխատանքի լավագույն նմուշները:

թ) Մալվել միջոցառումները Լենկերուժյան աշխատող կադրերի ընտրության և նրանց աճեցման գծով:

ժ) Ամրացնել Լենկերուժյան կապը ճարտարապետ-տեխնիկական և գիտական աշխատողների հետ և նրանց ներգրավումը Լենկերուժյան աշխատանքների մեջ:

ի) Ամրացնել Լենկերուժյան ճյուղային կազմակերպությունները յերկաթուղային տրանսպորտում և ստեղծել ճյուղային կազմակերպություն ջրային տրանսպորտում:

լ) Կազմակերպել Լենկերուժյան խորհուրդներ Գիտահետազոտական ինստիտուտներում:

խ) Ամրացնել Լենկերուժյան ստորին կազմակերպությունները գործարաններում, հանքահորերում, ՄՏԿ-ներում, խորհանտեսություններում, և կոլտնտեսություններում, վորպեսզի նրանք նվաճեն առաջատար դերը՝ առաջարկների իրացման ու իրենց հեղինակությունը բարձրացնելու համար մղվող պայքարում:

4091



275

248

9772 50 4.

РЕШЕНИЯ V ПЛЕНУМА
Центрального Совета Всесоюзного Общества
Изобретателей